Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ
Պատասխաններ՝ 11- 12-րդ դասարաններ

1. ***Վաղուց*** ՝ հազարամյակներ առաջ, Միջագետքում սփռված էր պերճաշուք Բաբելոնը, ***որ***, ամուր պարիսպներով ու դարպասներով շրջապատված, անկախ ու անառիկ էր պահում բյուրավոր բնակիչներ ունեցող քաղաքին: Եփրատի արևելյան բարձրադիր ափում արքայական ուղղանկյուն պալատն էր՝ միջնաբերդի երկնակարկառ ***աշտարակներով,*** որոնք, թվում էր, իշխում էին շրջակայքի վրա: Սակայն Բաբելոնի զարդը, իրավմամբ, նրա՝ զարմանահրաշ, աչք շոյող կախովի այգիներն էին: ***Ըստ Հերոդոտոսի*** ՝ այն հիմնել էր Նաբուգոդոնոսոր արքան՝ իրեն կնոջ՝ մեդիացի թագուհու ձանձրույթը փարատելու: Տեսնելով, որ դշխուհին թախծում է տոթակեզ քաղաքում՝ վերհիշելով իր զովասուն հայրենիքը, արքան որոշեց անակնկալ մատուցել. նա թագուհուն կնվիրի փարթամ մի պարտեզ՝ նման Մեդիայի ***ծառաստաններին:***

Քառահարկ աշտարակի վրա վառվռուն պարտեզներն ասես ***կախված*** էին օդում: Չորսը հարկ վեհորեն բազմել էին կորնթարդ կամարներին, վերջիններս էլ՝ քառանկյուն մույթերին: Որպեսզի Մեդիայի ***պատրանք*** ստեղծի, թագավորն աշխարհի տարբեր ծայրերից անգամ բերել տվեց հազար ու մի թփաբույսեր ու հազվագյուտ ծաղիկներ: Ճեմուղու եզրերը պատված էին վարդերով ու նրբաբույր ***եղրևանիներով***, քիչ այն կողմում խոլորձի և մարգարտածաղկի թփերն էին, իսկ դրանց կողքը՝ պչրանքով օրորվող ծփիները:

Դարեր անցան, ու Բաբելոնը ասուպի պես անհետացավ ժամանակի հոլովույթում, և ահեղահոս ջրհեղեղն ***հիմնովին*** կործանեց Նաբուգոդոնոսորի՝ ***կավից*** պատրաստված պալատը (ի դեպ, Բաբելոնում ամբողջ կառույցները կավաշեն էին), նաև՝ հուռթի պարտեզը:

2. քաղաքին-**քաղաքը,** ափում-**ափին**, իրավմամբ-**իրավամբ,** իրեն-**իր,** չորսը-**չորս,** կողքը-**կողքին,** ջրհեղեղն-**ջրհեղեղը,** ամբողջ-**բոլոր**

3.ծեքծեքանք-**պչրանք**, խաբկանք-**պատրանք,** տարաթույր-**վառվռուն,** յասաման-**եղրևանի,** անընստգյուտ-**հազվագյուտ,** հենասյուն-**մույթ,** ակնահաճո-**աչք շոյող,** ոստան-**հայրենիք**:

4. Բարդածանցավորներ՝ **հազարամյակ, Միջագետք, արևելյան, ուղղանկյուն, միջնաբերդ, շրջակայք, անակնկալ, վառվռուն, քառանկյուն, ահեղահոս:**

5. **Առաջ**-կապ, մակբայ, **որ**-հարաբ. դեր., շաղկապ, **անկախ**-ածական, կապական բառ, **թվում էր**-վերաբեր. բայ, **սակայն**-շաղկապ, վերաբեր., **իր**- դեր. գոյ., **նման**-ածական, կապ, **ասես**-վերաբերաան, բայ, **էլ** - մակբ. շաղկապ, վերաբերական **ժամանակ**-կապ, գոյական, **իսկ**-շաղկապ, վերաբերա., **անգամ**-վերաբեր, մակբ.,շաղկապ, **հազար**-թվական, գոյական

6. **Վաղուց**-ժամանակի պարագա, **որ**-ենթակա, **աշտարակներով**- որոշիչ, **ըստ Հերոդոտոսի**-հիմունքի պարագա, **ծառաստաններին**-հանգման խնդիր, **կախված**- ստորոգելի, **պատրանք**-ուղիղ խնդիր, **եղրևանիներով**- ներգործող խնդիր, **կավից**-անջատման խնդիր, **հիմնովին**- ձևի պարագա

7.**հողաչափ, տեսակետ, լուսանցք, սպի, որկրամոլ, սկիզբ, ճառագիր, բաղաձայն, ստինք, տաքդեղ, բելոռուս, կարմրախայտ, վերջալույս, փողկապ, ընձուղտ:**

9.**Պառնասի գագաթը բարձրանալ**- 1. ստեղծագործական /ներշնչանքի/ բարձունքի հասնել,
2. արվեստի մեջ բարձունքներ գրավել,

Արիադնայի կծիկ- բարդ՝ դժվար կացութունից դուրս գալուն օգնող միջոց,

գորդյան հանգույց- դժվարլուծելի, կնճռոտ խնդիր՝ գործ

Մորփեոսի գիրկն ընկնել-խոր, քաղցր քուն մտնել՝ քնել

վերջին մոհիկան-մի բնագավառի վերջին ներկայացուցիչը

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ
Գնահատման չափանիշներ՝ 11-12-րդ դասարաններ

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 5 միավոր:
   Յուրաքանչյուր կետադրական կանոնին վերաբերող յուրաքանչյուր ոչ ճիշտ նշանի դեպքում հանվում է 0,5 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 4 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 4 միավոր
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,25, ընդհանուր՝ 5 միավոր
   Բառերի քանակը պետք է կազմի 20 բառ:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5, ընդհանուր՝ 5 միավոր
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,2, ընդհանուր՝ 3 միավոր
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 ընդհանուր՝ 4 միավոր
9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 ընդհանուր՝ 5 միավոր

10. Շարադրությանը տրվում է 10 միավոր: Ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: